ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հեռագրում են ԻԳԴԻՐԻՑ. «Վանի ռուսաց փոխ-հիւպատոս կամսարական 25-ին սեպտեմբերի հասաւ Իգդիր և երկու օրից յետոյ այստեղից ուղեւորվեց դէպի Վաղարշապատ»։

—

Պ. Ալէքսանդր Շահինեանց Նովո-Իվանովսկից ուղարկել է մեզ 10 բուբլ հետեւեալ նամակով. «Յօգուտ Կ. Պոլսի Միացեալ ընկերութեան իմ խոստացած տարեկան վճարը, տասը բուբլ, անա ուղարկելով ձեզ, խնդրեմ հասցնէք ըստ պատկանելոյն»։

—

Մի երիտասարդ խնդրում է մեզ յայտնել որ տալիս է ընտանիքներում հայոց լեզուի, հայոց պատմութեան, ֆրանսիական և իտալական լեզուի դասերը։ Հարցնել հասցէի և պայմանների մասին «Մշակի» խմբագրատան մէջ։

—

Սեպտեմբերի 27-ին, կիրակի օր կատարվեցաւ հանդիսաւոր կերպով Թիֆլիսի կլասիկական գիմնազիայի յիսուն տարվայ գոյութեան տարեդարձը։ Աշակերտների օրկեստրը ածեց մի քանի եւրաժշտական պիէսաներ, գիմնազիայի դիրեկտոր պ. Մարկով մի առնաքանութիւն արեց գիմնազիայի այդ տօնախմբութեան նշանակութեան մասին, ուստերիչ Նովոմարիեվսկին մի ճառախօսութիւն արեց, որի մէջ նկարագրեց մեր գիմնազիայի յիսուն տարվայ կեանքը, յետոյ սկսվեցաւ աշակերտների պարգեւաբաշխութիւնը և տօնախմբութիւնը վերջացաւ դարձեալ երաժշտութեամբ և երգեցողութեամբ։

—

Սեպտեմբերի 26-ին, շաբաթ օր, ֆրանսիական թատրոնական խումբը առաջին անգամ ներկայացուցին տուեց Արծրունու թատրոնում. Ներկայացմանը մասնակցում էր պատմիչ պ. Բոգդանով, խմբի օրիորդների մէջ կան գեղեցիկ ձայներ ունեցող երգչուհիներ։ Հասարակութիւնը շատ գոհ մնաց ներկայացումից և մասնաւանդ կոմիկ պ. Բիւլայ շատ լաւ տպաւորութիւն ունեցաւ ամենքի վրա։ Խումբը կրկնեց իր ներկայացումը և հետեւեալ օրը։ Թատրոնը գրեթէ լի էր, բացի աթոռներից։ Պ. Դէմիր-Շէնկի օրկէսարը շատ լաւ է։

—

Ստացանք «Ժուրնալ դ'Օրիան» լրագրի համար Կուսարիից. պ. Վ. Ամատանց Հասան-Զալալեանցից 4 բուբլ. Ս. Պետերբուրգից պ. Յովսէփ Իզմիրեանցից 12 բուբլ. Ղուբայից 20 բուբլ հետեւեալ անձինքներից. որոնցից իւրաքանչիւրը տուել է մի մի բուբլ. Գ. Դաղեանց, Դ. Շիրիմանեանց, Վ. Յակոբեանց, Գ. Դոլզաթեանց, Թ. Գէորգեան, Մ. Բուկուսմանց, Յ. Մանգինեանց, Զ. Ազամեանց, Ա. Տէր-Գէորգեանց, Մ. Աբրիկեանց, Մ. քահ. Նաջարեանց, Ա. Վարդեանց, Յ. Տէր-Յովհաննիսեանց, Ն. Դաւթեանց, Յ. Խանսանամեանց, Յ. Գեւորգեանց, Ս. Դալլոյեանց, Յ. Միքայէլեան, Ս. Սուլթանեան, Ա. քահ. Թորգոմեանց։ Այդ քսան բուբլ այն փոգն է որ անցեալ տարի ուղարկվեցաւ պ. Բ. Բահաթրեանին որպէս նրա «Ռակագրի» բաժանորդագրութիւն, փաչաքէնդ գիւղից. այժմ բաժանորդների խնդիրքով, քանի որ գիրքը չէ տպվել, այդ քսան բուբլ նուիրվում է Վիէննայի լրագրին։ Առաջվայ 1116 բուբլ 50 կոպէկի հետ կանի 1152 բուբլ 50 կոպէկ։

—

Ստացանք Ատրախանից 40 բուբլ յօգուտ «Ժուրնալ դ'Օրիան» լրագրի։ Այդ փոգի մէջ 10 բուբլ ընծայեց Բագուի քնակիչ Զօրաս Սարգսեանց. իսկ մնացած 30 բուբլ, հետեւեալ անձինք, իւրաքանչիւրը 3 բուբլ. Մ. Ֆարրիկեանց, Բ. Իլիագեանց, Յ. Արաջալով, Մ. Ղազարինցեանց, Դ. Տէր-Սիմէոնեանց, Զ. Սուրաբէկեանց, Մ. Հախվերդեանց, Հ. Դուրումեանց, Դ. Բարխուդարեանց և Յ. Յովհաննէսեան։ Իսկ Գանձակից ստացանք Վիէննայի լրագրի համար 50 բուբլ հետեւեալ անձինքներից. Յովհաննէս Կարագաշով, Մկրտիչ Աֆանասեվ, Մամիկոն Մկրտումեանց, Մինայ Թէմուրով, Արտեմ Համասփիւր, Ղանրաման Յովհաննէսեան։ Առաջվայ փոգերի հետ կանի 1242 բուբլ 50 կոպէկ։

—

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՎԱՆԻՑ մեզ գրում են. «Ձեր լրագրին հաղորդված լուրը Նոր-Նախիջեւանցի պ. Գօգոլի կոտակի մասին մի բացառական երեւոյթ չէ կարող համարվել մեզանում։ Շատերը կան մեր հարուստ համաքաղաքացիներից, որոնք արել են մեծ կոտակներ, կամ գիտաւորութիւն ունեն անելու։ Բայց այդ ահագին կոտակները բոլորն էլ անհետանում են, ոչինչ հետեւանքին չեն հասնում։ Երբ կոտակողներին համոզում ես նուիրել իրանց ահագին գումարները հայութեան այնպիսի կենտրոններին, որտեղ հայերը չեն զուրս եկել իրանց պատմական հողից և գեռ խիտ կերպով են բնակվում, նրանք չեն էլ ուզում լսել ձեզ և կրկնում են թէ պէտք է անպատճառ կոտակ անեն իրանց քաղաքին։ Դուցէ ոչ մի տեղ չը կան այնպիսի հարստութիւններ, որքան Նոր-Նախիջեւանում»։

—

ԳԱՆԶԱԿԻՑ եօթ երիտասարդներ հանգանակելով իրանց մէջ 1 բուբլ, ուղարկեցին մեզ նամակով, խնդրելով որ նուիրենք այդ գումարը Մանկունու համար կառուցվող արձանի գործին։ Բայց, որովհետեւ, ինչպէս մենք շատ անգամ կրկնել ենք, արձանի կառուցման լուրը սխալ է, այդ պատճառով մինչեւ այժմ մեր խմբագրութեան մէջ այդ նպատակով հաւաքված 2 բուբլ 5 կոպէկ մենք խնդրում ենք նուիրողներին կարգադրել մի որ և է ուրիշ նպատակին, կամ բաժանված կը լինենք այդ 2 բուբլ 5 կոպէկ գումարը ուղարկել իրան Մանկունուն։

—

Ռոստով (Դոնի վրա) քաղաքում հրատարակվող «Донская Пчела» ռուսաց լրագիրը շարունակում է գրեթէ իւրաքանչիւր համարում ապագրել համակրելի և զօրեղ յօդուածներ հայոց խնդրի մասին։ Յայտնում ենք մեր կատարեալ համակրութիւնը պատուելի լրագրին իր այդ յօդուածների համար։

—

Լրագիրները լուր էին տարածել որ Թագաւոր Կայսրը և Լուսարքայի կայսրը շուտով մի տեսակցութիւն պէտք է ունենան։ Այժմ «Agence Russe» լրագիրը յայտնում է որ այդ լուրը հաւանական չէ, գոնէ այս տարվայ համար։

—

Կրիմից գրում են «Донская Пчела» լրագրին որ յանկարծակի ցրտերը վնասեցին Կրիմի խաղողի այգիներին։ Դեռ մարգիկը չեն յիշում որ աշխարհը այդքան շատ սիսեմին ցրտերը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

—

Հետեւեալ նամակը Բաղէշից կարդում ենք „Մանգումէի Էֆքիար" լրագրում։

Հայու բոլոր ցաւոց ու դառնութեանց „հասարակ տեղիքն" են անկանոն տուրք, տոկոս, անդպրոց գեղջկութիւն. հասուն գիտակցական խորհրդածութիւն մը Հայու բոլոր անբախտութիւնը որ երեք անպատահութեանց մէջ կը գտնէ, միւսները եղանակաւորութիւններ են. տուրքն ու տոկոս կը ծծեն Հայու բոլոր նիւթական ոյժը, կը կմախեն զայն, դպրոցներու անգոյութիւնը գեղերու մէջ հայ գեղջկականութեան ամեն հանգամանք կը ջրէ. „Հայու բոլոր անբախտութեան խորհրդոյ բարձրագոյն հանգամանքն է անկանոն տուրք, տոկոս, անդպրոց գեղջկութիւն"։

Անկանոն հարկահանութիւն մեր երկրի ընդհանուր ջղացաւն է. երեք-չորս զինուոր սատէպ կը վառեն գեղ մը, կերեն գայն, բընութիւն, սեռ չը խնդրուիր, հարկահանի վարոցը կը կապուտկէ մարդ, ու կենդ մարմինը թող հացի մը համար ըլլայ, թող չորս-հինգ դահեկանի համար ըլլայ. ո՛չ ոք չը կրնար բողոքել թէ չուզեր պատժուիլ։ Տուրք տուրքի կը յաջորդէ, գիւղացին կը ճնշուի, կը ծախէ կովն ու ոչխար, պարտք կանէ. կը պանդխտի...։

Գարատաէր ուրիշ հարկահան մէ, պարտամուրհակ իր վարոցն անուշ կը խօսի, երբեմն թիմու ինչպէս պարագաներ կը թելադրեն. կանցնի մի-երկու տարի գեղացին իր ճանկերու մէջ կառնէ, օր մը ցորենը կը գրաւէ, օր մը արտը, օր մը եզ, օր մը ոչխարն, գեղացին կը պանդխտի, երկիր չը գար, տուն չունի, տեղ չունի։

Այո՛, կը տրտնջի գեղացին հարկհանի ու վաշխառուի ձեռք, կը տրտնջի ու իր յետին շունչը ստէպ օտար տեղ կը փչէ, լեզու չունի, գրիչ չունի, անձայն է, տգէտ է, վաշխ ու տոկոս ճակատագիր կը կարծէ, չը գիտէ ընկերական, ազգային, անհատական որ և է մի բան. կոյր է ինք, կը զարնեն գլխուն կուտեն։

Ի՞նչ են այդչափ պանդուխտներ որք կը մեռնին ու կը մեռցնեն Հայու ապագայն։ Ֆիճակագրական մի տենդ ի՞նչպէս չը բռներ գիտատանդնուպօլսեցիս տարին վաթսուն հազարէն աւելի ծնունդներ կը խաֆռնուին. ծնողներէն շատեր հոս կը մեռնին, շատեր հոդ. ազգասէրները չեն հետաքրքրուիր գիտնալ ասոր պատճառը. անկանոն տուրքն է, տոկոսն է, անդպրոց գեղջկութիւնն է։

Կը կարծէ՞ք արդեօք թէ պանդուխտները քիչնան. քանի այս ցաւեր կան, մի օր չըլլար այս բան, օրէ օր ընդհակառակն կաւելնայ պանդուխտներու թիւը. միայն Խուլթիկայ գարնանէ 45 մարդ տեղդ եկեր է, 10 մարդ միայն տեղէդ հոս։

Ի՞նչ հիման վրայ կը բարձրանայ կաղաչեմ, Հայկական խնդիրը. քանի մը հարիւր գիւղերու վրա՞յ, որոց ցանկն ունիք կարծեմ աշխարհագրական անուններ են առանք, իրաւունք ունի ըսելու օտարը. մէջը մնէք բան չէք գտներ. անկանոն տուրքն արեց Կոմն ու Պուրանուխ. հազար ոսկի խարանով առնուեցաւ թշուառ Կոմէն, թշուառ Կոմէ՛ն. որ սոսի հոգեւարքին քանի մը քուռ ցորեն սիրտ արաւ առնել Տէրութեան ամբարէն. ածում, յառաջատութիւն չը կայ շատ գեղերու մէջ, թշուառ ապագայ մը կորստեան արհաւիրքով կը զարհուրեցնէ զիս։

Միացեալ ընկերութեանց մեծ մեծ սխալն եղած է քաղաքներու մէջ մեծամեծ դպրոցներ բանալ, մինչդեռ գեղացւոց համեմատութեամբ քսան տարի անդպրոց կրնայ մնալ քաղքցին։ Այս սխալի արդիւնքն այն կըլլայ որ անհամեմատ անհաւասարութիւն մը տի ծագի քաղքցւոյ ու գեղացւոյ մէջ. քաղքցին տի խելօքնայ, ճարպիկնայ աւելի կոզոպտելու գիւղացին, գեղացին ալ անքան, անտուն տի մնայ միշտ քաղքցւոյ առջեւ։

Ներեցէք ինձ հարցնել կաղաչեմ, ի՞նչ հարկ կայ Բաղէշի, Մշոյ, Վանայ մէջ մեծամեծ դպրոցներ բանալ, ուր հինգ-վեց դպրոցներ կան, երբ տեղացիք մի մի հարուստ Պօլսեցիներ են. ի՞նչ իրաւունքով խեղճ, ազգասէր անուանով ժողովուած սակներ, հարուստ, խելացի քաղքցւոյ օգտին կը գործածուին, երբ գեղեր դպրոց չը կայ, երբ գեղացին կրթուելու վրայ է, Ընկերութեան Մեծ. Անդամք լաւ գիտեն որ լուսաւորութիւնը ժողովրդական տարրի, գանգուածի վրայ է միայն։ Հռովմայեցիք, Յոյնք մեր այս աւուր վիճակն ունէին երբեմն, լուսոյ փոքր հոտով մը միայն կը նախապաշարուէին ապրիլ և սակայն այս սխալը շուտով տապալեց զիրենք։

Հայ գեղջկութեան բարօրութեան համար ամենախոնարհաբար կը խնդրեմ տոկոսի առաջքն առնելու համար դրամատուն մը բանալ հոս. քաղքի մի մի դպրոցներու փլատակաց վրայ գիւղերու մէջ քանի մը դպրոցներ բանալ, քիչ շատ ալ կանոնաւորել հարկահանութիւնը։

Տոկոս ու հարկը երբ կանոնաւորին ապրուստ կըլլայ հոս, կեանքը կը քաղցրանայ, պանդխտութիւնը մեծ հարուած կը կրէ, գեղերու մէջ երբ դպրոցներ բացուին գեղացին շուտով կը ճանչէ ինքզինք, անմիջապէս կը ժողովուի, բաւական է որ ուսուցիչ „Ծիշտ հայ" մ'ըլլայ, կը սկսի հարատեւալ ու զօրաւոր արմատներ ձգել իր թոռուան կուշտ։ Այս փոքր կարգադրութիւնով պանդուխտութիւնը կը սկսի վերցուիլ, երկիրը կը բազմաբղխայ, գեղերը կը հայանան ու կը կրթուին. նիւթական ու բարոյական այնպիսի ներդաշնակութիւն մը կոգեւորէ երկիրը որ ինքնաբերաբար հայկական անժխտելի խնդիր մը կը ծնի հարցի։

(Մանգումէի Էֆքիար)

ՖՐԱՆՍԻԱ

—

Ֆրանսիական մինիստրների խորհուրդը վճռել է հրատարակել Ցունիսի արշաւանքի համար արած ծախսերի հաշիւը, որ կը հասնի հազարաւորներ, թէ մինչեւ այժմ արած ծախսերը պատերազմական մինիստրութեան սովորական բիւջէներից աւելի չեն։

Արմատական կուսակցութիւնը Լուի Բլանի առաջնորդութեամբ մի պատգամաւորութիւն ուղարկեց մինիստր-նախագահ Ժիւլ Ֆերրիին, որին առաջարկեցին շուտ գումարել պատգամաւորների ժողովը, ի նկատի առնելով Ցունիսի գործերի ծանր դրութիւնը։ Ժիւլ Ֆերրի պատասխանեց, որ պատգամաւորների ժողովի գումարումը այժմ անկարելի է և հանգամանքներն էլ չեն պահանջում։ Նախկին պատգամաւորների իրաւունքները վերջանում են միայն հոկտեմբերի 14-ին, այնպէս որ, պարլամենտ գումարելով, հարկաւոր կը լինէր կանոնաւորապէս ընտրուած երկու ժողովների հետ գործ ունենալ, որոնցից հինը կը խանգարէր նորին։ Անմիտ կը լիներ հրաւիրել նոր պատգամաւորներին, քանի որ հինները դեռ ևս իրաւունքներ ունեն, հետեւապէս պարլամենտը հոկտեմբերի 14-ից առաջ չէ կարելի գումարել։

Գամբետայի բարեկամները հաւատացնում են, թէ նա չի քուէարկի պատգամաւորների ժողովի նախագահ լինելու համար, այլ կը մնայ հասարակ պատգամաւոր մեծամասնութեանը առաջնորդելու համար, որպէս զի վճռական ազդեցութիւն ունենայ կառավարութեան գործունէութեան վրա։ Պատմում են, թէ դա միակ պատճառ չէ, որ խանգարում է Գամբետային պատգամաւորների ժողովի նախագահ ընտրվելը։ Ժողովի մէջ շատերը կը բողոքեն Գամբետայի ընտրութեան կանոնաւորութեան մասին Բելվիլի մէջ և նրա պատգամաւորութեան հաստատելու ժամանակ երեւի երկար վիճաբանութիւններ կը լինեն։

ԱՄՍԵՐԻԿԱ

—

Գենեռալ Զեսամեր Աթաեր, Միացեալ Նահանգների փոխ-նախագահը, որ այժմ սկսեց վարել Հանրապետութեան նախագահի պաշտօնը, Կապիտոլիայում սահմանադրութեան հաստատիմ մնալու համար երդում տալուց յետոյ արտասանեց հետեւեալ ճառը։ „Մեր Հանրապետութեան պատմութեան ընթացքում այս շորրորդ անգամն է, որ մահը խլում է երկրի բարձր կառավարչին։ Մեր երկրի մէջ պատահած սարսափելի յանցանքը մեզ ամենքիս շոփոգանց վշտացրեց։ Բայց սպանված նախագահի, նրա կրած երկար տանջանքների, նրա անփոփոխ հաստատամտութեան, նրա տուած